Փաստ. անվանումը	ԱՇԽԱՏՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-35-01
Հաստատման ամսաթիվը	15/01/2007թ
Արձանագրության N	1-07
Հաստատող մարմինը	Հիմնադիրների խորհուրդ /Սուրեն Օհանյան/
Մշակող	Կադրերի բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Կադրերի բաժին

1. Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
12/12/2014	Կատարվել է ոչ հիմնարար փոփոխություններ, վերանայվել է կատարվել է լրացումներ	Սուրեն Օհանյան ռեկտոր

Ներածություն

Աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոնները դա այն նորմերի և կանոնների միացություն է, որը կանոնակարգում և հստակեցնում է միջմարդկային շփումները, վարքականոնները աշխատանքի տարբեր բնագավառներում և պայմաններում: Այն կոնկրետացնում է համամարդկային բարոյական նորմերն ու սկզբունքները՝ կախված կոնկրետ իրավիճակից, մարդկանց հասարակական խմբերից, խավերից, իրավական կամ այլ կառուցվածքային ձևաչափերից: Աշխատանքային էթիկան, որը կարգավորում է մարդկանց, աշխատողների վարքականոններն աշխատանքային և հասարակական կյանքում հենվում է զուտ մարդկային համընդհանուր բարոյական չափանիշների և արժեքների, ինչպես նաև աշխատողների բարոյականության վրա, որոնք ընդգրկված են քաղաքացիական և հասարակական կյանքը կարգավորող ոլորտում:

«Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի բոլոր աշխատակիցները, պարտավոր են ուշադրությամբ ծանոթանալ աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոններին այնպես, որ մեր կողմից ընդունված յուրաքանչյուր գործնական որոշում վկայի մեր վերաբերմունքի մասին էթիկայի նորմերին և օրենքներին: էթիկայի կանոնների պահպանումը շատ կարևոր է հանրության շրջանում կազմակերպության վարկանիշի բարի համբավը պահպանելու և ամրապնդելու համար :

Մեզանից յուրաքանչյուրի պարտականությունների մեջ մտնում է էթիկայի կանոնների գործող բոլոր օրենքների և նորմատիվ ակտերի պահպանումը:

Մեզանից յուրաքանչյուրը պարտավորվում է տեղյակ պահել էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ: Այդպիսի խախտումների մասին լռությունը և էթիկայի կանոնների չպահպանելը կարող են առաջ բերել մի շարք լուրջ իրավական հետևանքներ՝ մինչև աշխատանքային պայմանագրի լուծում:

Կազմակերպությունը ցանկացած ժամանակ և ցանկացած պատճառով կարող է ուղղել, փոփոխել, լրացնել և կատարելագործել աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոնները:

Աշխատողի աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոնները

«Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի աշխատողը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները՝

- հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները և պետական լեզուն
- կրել պատասխանատվություն «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի քաղաքականության և սահմանված գործընթացների ներդրման և կատարման համար
- Աշխատողի կարծիքը կամ դիրքորոշումը կարող է տարբերվել «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի կարծիքից կամ դիրքորոշումից, որը չի կարող խանգարել իր պարտականությունների կատարմանը
- լինել ճշտապահ, կարգապահ, զուսպ և օրինակելի
- «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ն ներկայացնելիս կամ իր իրավասություններիսահմաններում «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի անունից գործելիս , ուրիշների հետ շփումներում և գործողություններում լինել արդար և շրջահայաց
- աշխատանքային ժամերին և աշխատանքային ժամերից դուրս իր վարքագծով չնսեմացնել «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի նկատմամբ հանրության վստահությունը կամ վտանգել իր աշխատանքային պարտականությունները կատարելու հնարավորությունը
- «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի հեղինակությունը պահպանելու հարցում լինել սթափ և ուշադիր, որը ենթադրում է Աշխատողի կամ այլ անձանց կողմից սխալների և բացթողումների բացահայտում և վերացում, որոնք կարող են հնարավոր վնասներ կամ շփոթմունք առաջացնել
- չպետք է անտարբեր լինել այլ Աշխատողների անգործության և սխալների նկատմամբ: Նման իրավիճակների առկայության դեպքում պետք է սկզբում դրանք քննարկել տվյալ Աշխատողի հետ, իսկ արդյունքի չհասնելու դեպքում

դրա մասին տեղյակ պահել նրա անմիջական ղեկավարին, իսկ անհնարինության դեպքում՝ ռեկտորին

- հրաժարվել թանկարժեք նվերներից կամ հյուրասիրությունից՝ կապված աշխատանքային պարտականությունների հետ

- միշտ զգոն լինել այն իրավիճակներում, որտեղ Աշխատողի անձնական շահը կարող է հակադրվել «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ում իր պարտականությունների կատարման հետ

- լինել քաղաքավարի պաշտոնատար անձանց, Աշխատողների և ֆիզիկական անձանց հետ շփումներում, կողմնակալ վերաբերմունք չդրսևորել ընկերների և բարեկամների նկատմամբ՝ որպես Աշխատող

- արդար վերաբերվել գործընկերներին, ներգրավել նրանց իրենց առնչվող որոշումների կայացման մեջ, թույլ տալ արտահայտել այդ որոշումների վերաբերյալ իրենց դիրքորոշումը, չհամաձայնվելու դեպքում բացահայտել պատճառները և հավասար հնարավորություն տալ գիտելիքների ու հմտու-թյունների զարգացման համար

- գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, չխոչընդոտել այլ անձանց կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարմանը, խնայել իր և գործընկերոջ ժամանակը

- գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը

- հարգել և, եթե անհրաժեշտ է, հայցել գործընկերների պրոֆեսիոնալ կարծիքը՝ վերջիններիս իրավասության շրջանակներում և գնահատել նրանց ներդրումը

- աշխատանքային հարաբերություններում պահպանել էթիկայի կանոնները

- այլ կազմակերպությունների, անձանց հետ չքննարկել գործընկերոջ վարքագիծը, գործնական մասնագիտական և անձնային հատկանիշները

- չօգտագործել աշխատանքային պարտականությունների ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար
- աշխատավայրում պահպանել առողջության և ապահովության համապատասխան պահանջները ՝ փորձելով վերացնել կամ անմիջական ղեկավարին տեղեկացնել իր առողջությանը կամ ապահովությանը սպառնացող ցանկացած վտանգի մասին
- հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից
- կազմակերպության այլ աշխատողների և ուսանողների նկատմամբ թույլ չտալ անհարգալից վերաբերմունք, լինել զուսպ և կոռեկտ
- երբեք չպահանջել ուրիշներից պահպանել այն կանոնները, ինչն ինքը չի պահպանում
- երբեք չկրկնել այս ու այն կողմից իրեն հասած ասեկոսեները, ինչը կարող է վնաս բերել որևէ մեկի հեղինակությանը
- լրջորեն հաշվի նստել գործընկերների կարծիքի հետ
- առանց քաշվելու ու համարձակ ընդունել սեփական չիմացությունն այս կամ այն կոնկրետ հարցի վերաբերյալ
- չափից ավելի չխորանալ հարցերի ոչ կարևոր մանրամասների մեջ, ուշադրությունը սևեռել առավել հիմնարար ու խոշոր հարցերին
- հաստատակամորեն հասնել ընդունած որոշումների լիարժեք կատարման և ձգտել մշտապես առաջ շարժվել
- լինել ճշտապահ և ժամանակին կատարել մեծ թե փոքր խոստումները
- մշտապես լինել անկեղծ ու արդարացի, ընդունել խելացի առաջարկությունները, ճիշտ ընկալել և խրախուսել առողջ քննադատությունը

- ցանկացած պարագայում պահպանել մարդկային կերպարը, լինել սթափ, կարողանալ դրսևորել հումորի զգացում և անկախ իրավիճակից իրեն պահել հանգիստ , զգալ ազատ՝ առանց բարդույթների
- պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ

Աշխատողի անթույլատրելի վարքագիծը

Աշխատողին չի թույլատրվում՝

- որևէ վճարի կամ հովանավորության պահանջ ներկայացնել որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ նրանց կողմից նման առաջարկ ընդունել ՝ կապված Աշխատողի պաշտոնական դիրքի հետ : Նման պահանջը կամ առաջարկի ընդունումը ազդում է «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի հեղինակության և գործունեության արդյունավետության վրա: Նման առաջարկի մասին պետք է անմիջապես տեղեկացնել անմիջական ղեկավարին
- «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի սարքերը, ծառայություններն և հնարավորություններ առանց թույլտվության օգտագործել, այսինքն հեռախոսի, ինտերնետի, համակարգիչների և այլ գրասենյակային գույքի օգտագործում՝ «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի գործունեությանը չվերաբերող նպատակերով
- «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի անունը կամ կապերն անձնական, կամ «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի խնդիրներին չվերաբերող այլ նպատակներով օգտագործել
- ցանկացած վիրավորական նյութի փոխանցումը գործընկերներին՝ էլեկտրոնային կամ այլ միջոցներով անկախ նրանց համաձայնությունից
- գաղտնիության պահանջների խախտումը
- ֆիզիկական ուժի գործադրումը կամ սպառնալիքը
- ծխել աշխատանքի վայրում

- թղթի կտորների, ծխախոտի մնացորդների կամ այլ թափոնների նետելը հատակին
- աշխատանքային ժամերին կամ աշխատատեղում ոգելից խմիչքների կամ հոգեմետ նյութերի օգտագործումը, աշխատանքի ոչ սթափ ներկայանալը
- «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի իր գործընկերներին և պետական այլ մարմիններին աշխատակիցներին և հանրությանը վիրավորանք հասցնելը «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի ներսում և «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ից դուրս